

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мешак».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(չացի կիրակի եւ տոն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է տաճն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ՎԱՆՆԵՆԱԼԻՐԱՆԻՐԵՆԻ

վաղաժամ մահվան քառասներորդ օրը, կիրակի, յունվարի 26-ին, վաճառի մայր եկեղեցում լինելու է պատարագ և հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի ծնողները, ջոյըրը և եղբայրը ծանուցանում են ազգականներին և ծանօթներին: Պատարագի սկիզբը 10^{1/2} ժամին:

ԲՈՎԱՆԴԱՆԻՐԵՆԻ

Աղամեանի յիշատակին.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Նամակ
Կարսից. Նամակ Բաղուց. Նամակ Նուխուց.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Նա-
մակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանի. Ար-
տաքին լուրեր. ՀՅՈՍԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՆԵՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հնկերոյն յիշա-
տակին:

ԱՂԱՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վաղը, կիրակի, յունվարի 26-ին, Թիֆ-
լիսի Արտիստական ընկերութեան մէջ տե-
ղի կուսենայ մի ցերեկով Տանգուցեալ
նշանաւոր գերասան Պետրոս Աղամեանի
յիշատակին:

Մեր հասարակութիւնը, մենք հաւա-
տացած ենք, կը շտապէ իր ներկայու-
թեամբ յարգել այն տաղանդաւոր արուես-
տագէտի յիշատակը, որը տարիների ըն-
թացքում բարձր գեղարուեստական գուար-
ձուցութիւն էր պատճառում նրան և որը
այնքան նպաստել է հայ բեմական ար-
հեստի հռչակին:

Թատրոնական գործի կազմակերպու-
թեան մէջ թէ Թիֆլիսում և թէ գա-
ւառներում աշխատել են շատերը մեզանում:
Բայց ոչ ոքի չաջողից գերասանական տա-
ղանդը փայլեցնել այնպիսի ոյժով և կա-
տարելութեամբ, ինչպէս վիճակված էր
Աղամեանին, որը ոչ միայն բարձր կանգ-
նեց իր ժամանակակից բոլոր հայ գերա-
սանական կազմից, այլ և գրաւեց պատ-
կառելի տեղ համաշխարհային գերասան-
ների շարքում: Աղամեանը ցոյց տուեց,
որ հայ տաղանդը կարող է բեմական ար-
հեստի մէջ մտնել առաջնակարգ շարքերը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՋՍ ԳԻՐԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

Վահան Նալբանդեան

Իր մաքուր հոգիին հետ շարժման ալ անա-
րատ մնաց կանացի ամեն պաշտոտ հպումներէ:
մինչ իր չորսը ամենքը շատ ընտանի ու հա-
կաւոր, մանաւանդ շատ ալ ուսանողական կը
գտնէին կինը: Երբեք անոր հետ չէին խոս-
քել: Երբեք անոր հետ չէին խոսքել: Երբեք անոր
հետ չէին խոսքել: Երբեք անոր հետ չէին խոսքել:
Նալբանդեան, իր անկողինը գեղեցիկութիւննե-
րով լեցված, ունէր ինքն ալ իր հաճոյքները,
որոնք ձանձրոյթը իրեն անհպելի կը դարձ-
նէին: Երբ շուտ լուստը և օպերա կը յաճա-
խէր, Տրապիստան 7 անգամ լսելով, Վաչանի
օպերաներէն ոչ մէկը բաց չը թողնէր: Ինչքան
ալ կրկնէին Ձրկանքները գինով, ամենա-
կանոնաւորութեամբ ներկայ կը լինէր Լայպցի-
գի չորսը: Երբ օրվան Gewandhaus-ի հրա-
շարի նուագախումբներուն, որոնց մէջ վերա-
դարձին, սուրը հալածէր մը տակ, կը ջանար
միշտ եղանակները:

Անկեղծօրէն և երախտագիտօրէն կը սիրէր
իր մտաւոր հայրենիքը, Գերմանիան, որուն
սքանչելի կրթական բարձրագոյն հաստատու-
թիւններէն դուրս ալ այնքան գեղեցիկութիւն-
ներ և մեկնութիւններ կան իր արտին խօսող:
Սղալի դատաւարութիւն մը պիտի լինէր:

Լ. Եւրոպական թատրոնական զարգերը
փոխադրել հայկական բեմի վրա:

Աղամեանի գործունէութեան մէջ մենք
տեսնում ենք երեք խոշոր բարեփոխում-
ութիւն: Բարձր տեխնիկա, մշակված լեզու
և պիեսների խորին ուսումնասիրու-
թիւն: Աղամեանը լուրջ աչքով էր նա-
յում բեմի և բեմական արհեստի վրա:
Նա ուսումնասիրում էր իր դերը արհես-
տի տեսակէտից մինչև կատարելութիւն,
նա խորատուգլուխ էր բառերի և նախա-
դասութիւնների մէջ, աշխատելով իր ա-
սելիքը արտասանել մաքուր և տպաւորիչ
լեզուով, նա թափաւրում էր ներկայացրած
տիպի հոգեբանութեան մէջ, ջանալով վե-
տական դասերը բեմի վրա անձնաւորու-
թիւններ իրանց խոսքերով, մտքի և զգաց-
մունքի գեղեցիկութեամբ: Տաղանդը—տա-
ղանդ էր, բայց այդ տաղանդին ուղեկից
առաջ էին ընթանում լուրջ աշխատանք
և ուսումնասիրութիւններ, որոնց շնորհիւ
նա դառնում էր բեմական մի հսկայ, որ
իշխում էր հանրապետական երեւոյթի և
արտի վրա:

Աղամեանը գիտէր մեծագէտ օգտվել
բնագրաբանութիւններից և նկատողութիւն-
ներից, կռուել կարծիքների նշանակութիւնը
և կատարելագործել իր արվեստը: Այդ
կողմից նա մնում է մի կատարելագործ
հասարակէտ, որ կը մնայ մշտապէս, իբրեւ
մի գեղեցիկ օրինակ իր յետնորդների հա-
մար խրախուսելու նրանց գէպի աշխա-
տանք և կատարելութիւն:

Մեզ համար հաճելի է արձանագրել,
որ հայ բեմը ունի մի այդպիսի հռչակա-
ւոր անուն և կարող է այդ անունով քա-
ջարել ժամանակակիցների գործերը
այն բեմի համար, որտեղ գործում էր ու

Գերմանիային հետ մտնել, եթէ միմիայն
արդար պարտաւորութիւններ գինքը ետ կը
կանչէին: Իր ծնողներն ալ օր առաջ օգտակար
լինելու ցանկութիւնը լայն տեղ մը կը բռնէր
իր մտահոգութիւններուն մէջ:

Մեկնելէն քիչ ետքը միշտ «Մշակին» մէջ
ցրված կը գտնէինք իր գրական-քննադատա-
կան յօդուածները, որոնք կարճ ժամանակի
մէջ իր անունը սիրելի դարձուցին ընթերցող
և հասկցող մեր ազգակիցներուն: Քիչ մը զար-
մանքով կը հետեւէ իր գրականութեանը, զին-
քը կը ճանաչային իր մասնագիտութեան շրջա-
գծին մէջ և, ընտանեացի, իր մէջ աւելի պատ-
մական, գեղարուեստական ուսումնասիրու-
թիւններ կը սպասէին Սակայն ան շատ առիթ-
ներով ապացոյցը տուաւ որ, իր բազմակող-
ման ծանօթութիւններով, մէկ օրէն միւսը
կրնար վերլուծել և Բրանդտի գործերը ճանչե-
նել, Լամպրէիտի վերջին աշխատութեան վրա
խօսել, նոր հրատարակութեան մը գրական-
կանին հետ թատրոնական քննադատութիւն մը
ստորագրել:

Նոյնպէս մեծ ուրախութեամբ մը նկատե-
ցինք, որ իր գրական ուսումնասիրութիւննե-
րուն և թատրոնական քննադատութիւններուն
մէջ գիտունի և մասնագէտի ֆորմիւլներով չէ
որ կը շարժի: Նկատի կ'առնէր հասարակու-
թիւնը որ պիտի կարգար և համար իր գործ-
ները Համբարի ներկայացման մասին խօսած
ատեն նախ, առաջին ու երկրորդ յօդուածով մը,
կը ջանար Տանտարակութեան իշխանին հոգեբա-
նութիւնը ընել մեզի, յետոյ, երկրորդ յօդուա-

փայլեց Աղամեանը և որին այնքան ջերմ
կերպով սիրում էր Համբարի տաղանդաւոր
կատարողը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՓՈՔՐԻԿ ՆԱՏՈՂՈՒԹԻՆՆԵՐ

Անցեալ տարվանից, ինչպէս յայտնի է, Թիֆ-
լիսի ժողովարանում տեղի ունեն ներողների
կանոնաւոր ներկայացումներ: Այս գործը այժմ
հասել է այնպիսի դրութեան, որ կարելի է
յուսել, որ ապագայում կը դառնայ հասարա-
կութեան մի որոշ դասակարգի համար պա-
հանջ—գոնէ այդպէս է երևում այն յափշտա-
կութիւնից, որ ցոյց է տալիս ժողովարանի
հասարակութիւնը գէպի այդ ներկայացում-
ները, նախօրոք սպառնելով բոլոր տոմսակները:
Որ գործը լաւ դրված է և գնում է լաւ արժա-
նագրից թէ հայոց և թէ ռուսաց մամուլի
կողմից: Այժմ մեզ հետաքրքրող խնդիրն է, որ
նա այնպէս վարվի և այնպիսի կազմակերպու-
թիւն ստանայ, որ դառնայ մշտական, ազատ
և անկախ անհատների քառահանգիստից—որ-
պէս զի աշխատելու ցանկութիւն ունեցող իւ-
րաքանչիւր մարդ պարզապէս գիտենայ, թէ
ինչպէս համար և սրպիսի պայմաններում պէտք
է աշխատել:

Մեր կարծիքով, այսպիսի գործը որքան որ
կազմակերպված մարմնի ձեռքին լինի, այնքան
կատարելաբէ:

Անցեալ տարվանից արդէն սկսել է գործել
նորահաստատ Պրամատիքական ընկերութիւնը,
որ իրաւունք ունի Թիֆլիսի նահանգում կազ-
մակերպել ներկայացումներ: Ահա հէնց այդ
ընկերութիւնը կարող է եկող սեզոնին օրինա-
ւոր և պաշտօնական կերպով պայման կապել
ժողովարանի վարչութեան հետ՝ որպէս զի ժո-
ղովարանը իրան անհամբեր համար տայ ներ-
կայացումները, որոնց կազմակերպողը կը լինի
Պրամատիքական ընկերութիւնը դրամական ու-
րոշ պայմաններով—կամ թէ հէնց այժմեան
պայմաններով, այսինքն ընդհանուր մուտքի
կէսը ժողովարանի օգտին թողնելով, իսկ միւս
կէսը Պրամատիքական ընկերութեան օգտին:
Սիրողների ներկայացումների ներքին կազմա-
կերպութեան համար Պրամատիքական ընկե-
րութեան վարչութիւնը կարող էր կազմել մի
առանձին մարմին, իրանցից ընտրելով յատ-

կապէս մէկին և իբրեւ նրան օգնող ընկեր-
ան և իր չորս հոգի ընտրել տալ սիրողներից: Այդ
5 հոգին կը վարեն գործը ամեն կողմից—թէ
բէպետուար կազմելու, թէ դերեր բաժա-
նելու, նիւթական և այլ հոգսերը քաշելու
համար:

Ահա ինչ օգուտներ կան այդ տեսակ կազ-
մակերպութիւնից:

Նախ՝ որ ծախսերի զգալի խնայումն կը լի-
նէր, որովհետև սիրողների համար սակարկող կը
լինէր յատուկ ռէժիսոր, որ ստանում է
այժմեա ամսական 200 ռուբլի, այլ այդ պաշ-
տոնը կը կատարէր Պրամատիքական ընկերու-
թեան խմբի ռէժիսորը, ունենալով մի օգնա-
կան փոքրիկ վարձատրութիւնով. նմանապէս
պիէսներ ձեռք բերելու և արտագրելու համար
չէր լինի սակարկող ծախս և այս բոլորը կը
մնար Պրամատիքական ընկերութեան անդու-
կում, այնպէս որ մի սեզոնում այդ խնայողու-
թիւնը կարող էր հասնել 1000—1200 ռ. և այս
գումարին աւելացնելով այժմեան իսկ դրու-
թեամբ ստացված գումար օգուտը (իւրաքանչիւր
ներկայացումից մօտ 25 ռ., իսկ սեզոնում մօտ
500 ռ.) և երկու անհրաժեշտ թէնէֆիսներ—
խմբի և ռէժիսորի—եկամուտը մօտաւորապէս
800 ռ., ուրեմն Պրամատիքական ընկերութիւ-
նը այս գործից կարող էր սպասել օգուտ կը-
րիկ մի գումար, մօտ 2500 ռ. և այդպիսով
ծածկել իր ղեկիցիտը:

Երկրորդ՝ այս երկու գործող խմբերի, այ-
սինքն գերասանական և սիրողների մէջ կը լի-
նէր սերտ յարաբերութիւն և պահանջված ժա-
մանակ լաւագոյն սիրողները կարող էին մա-
նակցել նաև գերասանական ներկայացումներին:
Պէտք է նկատի ունենալ, որ հասարակութիւնը
ձանձրանում է բեմի վրա միշտ և նահապաղ
տեսնելով մի և նոյն անձնաւորութիւնները:
Մեր կարծիքով ժողովարանի ներկայացում-
ների աջողութեան գաղափարներից մէկը նա է,
որ ամեն ներկայացման հանդէս են գալիս մի
քանի նոր սիրողներ և շարժում հասարակու-
թեան հետաքրքրութիւնը:

Երրորդ, Պրամատիքական ընկերութեան
խմբի ռէժիսորը, համաձայն այնտեղի պայման-
ների, իրաւունք ունի մասնակցելու ուրիշ ներ-
կայացումների իբրեւ գերակատար և ամբողջա-
պէս իր ուղքը կը դարձնէ սիրողներին լաւ
պատրաստելու վրա:

Չորրորդ, իրաւագան շրջաններում պտտող
այն լուրը, թէ սիրողների սկսած գործը լուրջ
իրաւունքին համար:

Մեզի, ուսանողներուն և նորերուն համար
այս գործուն կեանքը դասերով լեցուն է: Իր
գործը և յիշատակները պիտի շարունակեն մեր
սրտին խօսել և գեղեցիկ թելադրութիւններով
մեզ մղել այն ճամբան, ուրիշ քայլից և ուր
գլորվեց ինքը, թէ և իր գերեզմանին վրա մեր
սէրը միշտ պիտի հսկէ, բայց անոր ընտելիչ
տունը անխնամ ձգված սղուտ մը արտակնկեղ
յուզումովը մեզ կը վրդովէ: Իր բարեկամները
և ընկերները, որոնց մէջ կը ճանաչում սրտի և
մտքի տէր երիտասարդներ, անուշտ պիտի
չուզեն որ մոռցիլի այդ սիրելի անունը, որ երէկ
մեզի այնքան բան կրտէր: Կարծէ և պարտա-
ւոր ենք կանգնել իրեն արժանի յուշարձանը,
որով մեզի դաս ու կեանք բոլորին: Իր կենսա-
գրութեան հետ իր քառագոյն գրուածքներուն
հրատարակութիւնը կը լինի այդ յուշարձանը:

Լսելով Գիօթէին, զոչ գերեզմանի մէջ, ոչ
գերեզմանին վրա կը կրտէր կարտի մեծա-
պէս արժանի պոյնէ Էսկ մը:
Վերջին ինչ տարվան նորերուն մէջ ոչ ոք
այնքան արժանի է կարտի և ոչ ոք այնքան
ազնիւ և մաքուր եղաւ, որքան Վահան Նալ-
բանդեան, որուն դէմքը կուրուսագլով է հիմա
աչքերու դէմ, Լայպցիգի կայարանը, հեղափո-
ղութիւնը մէկ պատահական դուրս, մեզի «ցուե-
սութիւն» աղաղակելով:

Յոռութիւն, բայց ուր:

Ատոմ Եսէն

Պարիզ

կերպով փնտրում է դերասանական խմբի ներկայացուցիչների մոտեցումները—թէ և ի հարկէ եթէ լուրջ կերպով քննենք, դա միանգամայն սխալ հայեացք է—ինչն ըստ ինքեան կը վերանայն, որովհետեւ բոլոր ներկայական օգուտը կը մնայ Իրամատիւական ընկերութեան օգտին:

Հինգերորդ, մեր առաջարկած կազմակերպութիւնը այն յարմարութիւնը կունենայ, որ սիրողները, որոնք իսկապէս կազմում են գործի հոգին, կը զգան, որ իրանք են լինելու գործի տէրը և զեկաւարը և թէ իրանց աշխատանքը թէ բարոյական տեսակետից և թէ ներկայական կողմից ապահովված կը լինի անհատներին քրմաճառագործներին և կը հասնի որոշ նպատակի մինչդեռ այժմեան գրութեամբ նրանց աշխատութիւնը թէ և հասարակութեան կողմից վարձատրվում է ներթափառ, բայց ներթափառ կարգադրութիւնը և գործադրութեան եղանակը կախված է ոչ իրանցից և նրանք չը գիտեն թէ ո՞ր է գնալու իրանց աշխատութեան արդիւնքը, այնպէս որ այժմեան գրութեամբ սիրողները կարծես նրա համար են, որ սպասեն մինչև նախաձեռնողը կամ րէֆորմիստ ասէ, «եկե՛ք, շարժարկե՛ք, խաղացե՛ք և հետացե՛ք», չունենալով ոչ մի կապ գործի հետ:

Դարձնում ենք այս կարեւոր առաջարկութեան վրա Իրամատիւական ընկերութեան վարչութեան ուղարկութիւնը: Յոյս ունենք, որ իշխանուհի Մ. Թումանեան՝ որ ձեռնարկող է եղել այս գործին և մի և նոյն ժամանակ վարչութեան անդամ է, կողմնար կերպ գործերի ընդհանուր շահերի համար օր առաջ իրազեկուել այս առաջարկութիւնը:

Անյուշ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Յունվարի 20-ին

«Մշակի» 9-րդ համարում մենք կարդացինք, իբրեւ թէ Կարսի քաղաքային դպրոցում սովորող հայ կաթօլիկ երեխաների ծնողները պատուիրում են նրանց հայերէն լեզուի դաստառութիւններին բացակայ լինել կամ աւելի պարզ ասած՝ հայերէն լեզուն չը սովորելու Զարմանք և ծիծաղ պատճառեց մեր այդ լուրը: Թղթակիրը չեղտում է, թէ ինչո՞ւ են փակվել մութ խցերի մէջ հայ կաթօլիկ վարդապետները: Այո, եթէ ճիշտ այդպէս լինէր, ևս էլ կը հոս մողէի, որ թող մութ խցերի մէջ չը փակվին նրանք:

Երեխաներից մէկը, չափազանց ծոյլ, խոյս է տուել դասերից, պատճառ բերելով, թէ ծնողները համաձայն չեն հայերէն դասատուութեան ժամանակ ներկայ գտնվելու: Եւ ահա դրանից ստեղծվել է պատմութիւնը:

Ներկայումս Կարսի հայ-կաթօլիկները մի փոքրիկ ժողովուրդ են կազմում, ունեն երկու սեռի մանուկներ ռուսաւորման, որի մէջ սովորում են մօտ հարիւր քսան երեխաներ՝ աղջիկ թէ տղայ: Սրանց կէտը լուսաւորական երեխաներ են և սովորում են շատ աղող կերպով. դպրոցն ունի երկու լուսաւորական ուսուցիչներ, որոնք սովորեցնում են հայերէն լեզուով, մի և նոյն ժամանակ ձայնագրութեան ուսուցիչը մասնակցում է պատարագի ժամանակ դպրութեան: Եկեղեցական այդ երգչիկ խումբը պատրաստվում է միայն տղաներից, բայց կը ցանկայինք, որ նրանց հետ աղջիկներն էլ երգէին:

Լինում են ներկայացուցիչներ և երեկոյթներ յօգուտ ուսումնարանի, և բաւականին աղող կերպով: Այս բոլորի պատճառը եղել է Հ. Կ. վ. Դիւրիկեանը և հայ կաթօլիկները կարող են միայն չորհրակալ լինել նրանից:

Այսպիսի ուսումնարան ունեցող փոքրաթիւ ժողովուրդը խոյս կը տար արդեօք իր մայրենի լեզուից, կը խրատէր արդեօք իր մատաղ սերունդին, որ հայերէն չը սովորէ: Ո՛չ, և միթէ վարդապետները մութ խցերի մէջ լսել են յանդուգն երեխայի պատասխանը: Ելի ոչ:

Ռ. Ոսկանեանց

ՆԱՄԱԿ ԲՍԳՈՒԻՑ

Յունվարի 21-ին

Թէ որքան անկանոն գրութեան մէջ էր դըրված հայոց թատրոնի գործը, այդ մասին աւելորդ եմ համարում խօսել, նկատի ունենալով, որ այդ հարցը Բագուից գրված թղթակցութիւնների մէջ մի քանի անգամ շոյափվել է: Այժմ իբրեւ փաստ կարող եմ հաղորդել, որ թատրոնական վարչութիւնը էլ գոյութիւն չունի. գոնէ այդ է ապացոյցանում այն, որ դերասաններին յունվարի ոտձիկները բաժանելիս յայտարարվել է, որ նրանք իրանց ձար տեսնեն և իջուր վարչութեան վրա յոյս չը

դնեն: Սակայն այդ յայտարարութեան հետ չէ համաձայնվել պ. Արմէնեանը: Նա պայմանի համաձայն պէտք է ստանալ մինչև սեզոնի վերջնալը ամիսը 275 բուրձի, հաշուելով 150 ր. իբրեւ դերասանի և 125 ր. իբրեւ ռեժիսորի վարձ: Բայց և այնպէս վարչութիւնը բաց է ի բաց մերժել է պ. Արմէնեանի պահանջները: Պարոնը դիտարկութիւն ունի դատարանի միջոցով պահանջել իր հասանելիք վարձը:

Միւս կողմից էլ ուսաց թատրոնի վարչութիւնն է ներդրում. համաձայն պայմանի, հայոց վարչութիւնն պէտք է շարաթիւ երկու անգամ ներկայացուէ տալ: Այդ բանը հիմա հայ դերասանական խումբը չէ անում, հետեւաբար և չէ վճարում թատրոնի վարձը: Ռուսաց թատրոնի վարչութիւնը մի քանի անգամ պահանջելուց յետոյ գիմել է դատարանին: Եւ կարծում եմ գուցէ և այս միջոցին չը դիմէր ուսաց թատրոնի վարչութիւնը, եթէ ինչն էլ չունենար զեփեցիտ:

Թէ ինչպէս կը վերջանայ այս բոլորը, դժուար է բացատրել, և մենք չենք կարող մեր ցաւակցութիւնը չը յայտնել: Այսպիսով կրկին ու կրկին անգամ ապացուցվում է, թէ որքան անփորձ մարդկանց ձեռքին է եղել Բագուի հայոց թատրոնական գործը:

Սակայն կայ մի փոքրիկ միջկերպական բան: Մնացած դեք սանները տեսնելով, որ վարչութիւնն ամբողջ բանից ոչինչ չէ կարելի սպասել և ձեռնադր այս ժամանակին ոչ մի տեղ չէ կարելի գնալ, սկսում են իրանց մասին մտածել և գնդին են այն եզրակացութեան, որ կարելի է ընկերական հիմունքներով շարունակել ներկայացուցիչները մինչև սեզոնի վերջը: Արդէն պայմանաւորվել են արտիստիկական ընկերութեան վարչութեան հետ ներկայացուցիչները այդ ընկերութեան դաշխնում՝ տարւո նպատակով: Այս դաշխնը իր անյարմարութիւններին հետ ունի և յարմարութիւններ, որոնք կարելի են դարձնում հայոց ներկայացուցիչները, օրինակ, էժան վարձը և բացի դրանից ցանկացած օրերը ներկայացում տալը: Աս այժմ վճարված է չաբար մի անգամ միայն խաղալ, այն է կիրակի օրերը, իսկ յետոյ հաւանական է, որ երկու անգամ խաղաւոր Պ. պ. դերասանները յոյսները դրել են ուղղակի ժողովուրդի վրա, և նկատի ունենալով, որ հայոց ներկայացուցիչները յաճախում է գլխաւորապէս միջին և հասարակ դասակարգը, ուստի չեն մոռացել և տեղերի գնելը յժամացիներ վերջապէս արված է ամեն ինչ՝ ժողովուրդին դիւրութիւն տալու համար: Մնում է որ հասարակութիւնն էլ ուշադրութիւն դարձնէ մայրենի բեմի վրա: Ելի օրվայ համար ենք ապրում, որ 30—40 տարվայ հայկական բեմը և նրա ծառայողները պէտք է խղճալի դրութեան մէջ լինեն: Մարդիկ որքան որ անտարբեր լինեն, այնուամենայնիւ քիչ էլ ինքնասիրութիւն պէտք է ունենան...

Կով.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Յունվարի 19-ին

Գաւառը հասարակական հարցեր չէ ծնում. ծնողները համարեն միշտ ինտրոնական քաղաքներն են լինում. գաւառը միմիայն արձագանք է տալիս: Սակայն վերջինս էլ բոլոր հարցերին միատեսակ չէ արձագանք տալիս: Լինում են հարցեր, որոնց հետ ժողովուրդը լրագրութեան միջոցով ծանօթանալուց յետոյ է միայն իր ձայնը հանում. լինում ևս հարցեր, որոնց հէնց ծնվելու ժամանակ գաւառն արդէն մասնակից է լինում, այս անգամ արդէն կարիք զգալով լրագրութեան օժանդակութեան:

Վերջինս հայի միտքն ու ուղեղը զբաղվեց մեծ հրապարակախօսի մասին տառամեակի յիշատակով: Մի հասարակական հարց, որին հայ մասնանի միմիայն հոգեհանգիստներով կարող է մասնակցել:

Սրանից մի երկու տարի առաջ էլ մի այդպիսի առիթ տեղի ունեցաւ, երբ ժողովուրդը կրկին հոգեհանգիստներով յարգեց իր ցոյց տալիս: Այդ ժամանակ հեռու հիւսիսում վախճանվել էր Գր. Ջանչեանը: Ռուս և հայ մասնակցները միասերման նրա մահվան առիթով իրանց խոր միջոց, անվերջ ափսոսանքը յայտնեցին: Հայ մասնանի ծանօթ չէր այդ գործին: Բայց, նրա մասին կարողացաւ այստեղ, այնտեղ, ծանօթացաւ, հաւանք և ապա միայն տեսնում ենք, որ ամենայնու ընկած գիւղումն անգամ հոգեհանգիստ են կատարում: Բնակելով մեծ քաղաքների օրինակին, ճառեր են արտասանում, ճառեր շարժական, լրագրութիւնից առած, սովորով՝ «Տաղանդաւոր գրող, անմահ հասարակ-

կական գործիչ, մեծ բարեգործ, ճշմարտութեան և լոյսի պայողաճ» և այլն, և այլն:

Այլ բան էր Գրիգոր Արծրունու յիշատակն յարգելը: Այստեղ այլ ևս կարիք չը կար լրագրական մեծագործը յօդուածներին, որպէս զի ժողովուրդը ծանօթանալիս գործին հետ: Բաւական էր միայն, որ յայտարարվեց նրա մահվան տառամեակի լրանալը, նրա մահարձանի բացումը և ժողովուրդը ինքնաբերաբար գիտակցեց յարգելու մեծ մարդու յիշատակը: Եւ դա բնական է, քանի որ նա դեռ այդ մարդուն կենդանութիւնից էր ճանաչում, որի ապացոյցը՝ նրա չը տեսնված թաղման արտայայտած երախտագիտական ցոյցերը, այդ պատմութիւնը շատ շատ անգամ է լսել հայր: Արծրունին ժողովրդականացած էր և այդ էր պատճառը, որ չուտով նրա անունն ու իր գործի երկու մտապատկերները ժողովուրդը չփոխեց: Նրան չատերը Մշակ են անուանում, նա «կազէթ կրող Մշակն էր», ժողովուրդի ամենամօտիկ բարեկամը:

Ժողովրդականաւոր չորհիւն է, որ մենք լրագրութեան կարգալիս նրա յիշատակին կատարված հոգեհանգիստներին չենք նկատում: Այլ ևս ջանքիսական շարժական ճառերը: Ջանազան տեղերում հոգեհանգիստին խօսողների մէջ նկատում ենք ինքնուրոյնութիւն և անհնական հանդուժողութիւն սեփական կնիք: Բագու մարդկանի էր Արծրունին, ինչպէս և ճանաչում է ժողովուրդը, բազմազան են նրա յիշատակին արտասանված խօսքերը:

Բայց արդեօք ժողովուրդն էլ սովորական կերպով մասնակցեց վերջինս հոգեհանգիստին: Առաջ բերեց յայտնող մեր տեսածը:

Նույնիս, չը նայած որ գաւառական քաղաքների շարքերի վերջին մասերում հազիւ իր գոյութիւնը նշմարելի է դարձնում, մասնակցեց այդ հասարակական ցոյցերին: Հոգեհանգիստը կատարվեց և որքան հնարաւոր է այդ հոգեհանգիստին շուք էր տրված: Սեզոնի վրա աչքի էին ընկնում գեղեցիկ պալատներ «Նուխու հայ երիտասարդներից» և «Նուխու հայ օրիորդներից» մակագրութեամբ: Ժողովուրդը խուռն բազմութեամբ լցվել էր եկեղեցին մասնակցելու հանդիսին: Հոգեհանգիստը սկսվեց Ներսիսեան դպրոցի նորաւարտ սան Կ. Մ.-ի դամբանականով, որ ներկայացրեց հասարակութեան Արծրունու կենսագրական գործունէութիւնը և վերջապէս փոխանորդ Սիւս վարդապետի քարոզով: Վերջինս քարոզն էլ բազմազաններին էր: Ժողովուրդի ականջին երեւմի զանազան լուրեր են հասել, թէ Մշակը բրնձածնում չէ, լուսաւորական եկեղեցու թշնամին է և այլն և այլն, և ահա եկեղեցու պաշտօնական, վարդապետական գաւառում մի ձեռքին, խաչը միւս, բացականչում է, որ նա քրիստոնեայ և մասնաւորապէս հայոց եկեղեցու գաւառ էր, բարեւ բուն նշանակութեամբ, որ նա Աւետարանի իսկական աշակերտն էր: Եւ հայր սուրբի խօսքը համոզել էր: Հանդէսը վերջանում է: Ժողովուրդը խորապէս ազդված ու զգացված է, մի և նոյն ժամանակ և գոն ու ուրախ, որ իր երախտագիտական պարտը հատուցեց և նա իր վարդապետը գլուխ տաճ կամեցաւ իր հոգեւոր մասնակցութիւնը իմացնել որքան կարելի է շուտ ուր հարկն է *):

Բայց որտեղ չէ տեղի ունեցել այս նոյն ոգեւորութիւնը, որտեղի հոգեհանգիստը այս նոյն շքով չէ կատարվել, որ հասարակութիւնը չէ զգացել: Ուրեմն մենք ուրախ պիտի լինենք, որ մեր հասարակական գործիչներն էլ յարգվել գիտեն հասարակ ժողովուրդի մէջ ըստ արժանոյն, ինչ անենք որ լսել հոգեհանգիստներով...

Ա. Հօրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մենք դարձնում ենք մեր բաժանորդներին ուղարկութիւնը հետեւեալ հանգամանքի վրա: Նրանցից մի քանիսը գրել էին իրանց հասցէները խառն ու անորոշ և այժմ գրամատու է, որ հասցէները տպված են ոչ այնպէս, ինչպէս հարկաւոր է: Նորից խնդրում ենք հասցէները գրել պարզ և որոշակի: Հասցէները նորից տրապարել ժամանակ է պահանջում և լրագրի ուղարկելը ընդհատում է:

Մենք ստացանք պօստ-կարտեր, որոնց վրա նկարված է հանգուցեալ դերասան Պ. Ադամանը իր մի քանի դերերում: Պօստ-կարտերը պատրաստել է Ս. Սողոմոնեան:

* Մշակի՝ ներքին լուրերում տպված էր ուղարկած հեռագրի պատճենը:

Անցեալ 1902 թւականին Պետերբուրգում կայացած անախադորական համառոտական ցուցահանդէսի պարգևաբաշխ կօմիտէտը հետեւալ պարգէններ է նշանակել հայ էքսպօնէնտներին: Արծաթեայ մեծ մեդալ—պատուական Թարլիմանեանին և Յ. Մեյքեանին: Արծաթեայ փոքր մեդալ—Կարապետ Սերոբեանին, Վանցեանին, Մ. Յակոբեանին: Բրոնզեայ մեդալներ—Դարչո Սարգսեանին, Գէորգ Գալստեանին, Յովհաննիսեանին (մանուկէն համար), Յովհաննիսեանին (յարգեալ գործուածքների համար), Բառեհեանին: Գովաստական թերթ—Մովսէս Աղաջեանին, Խուզեանեանին, Գուշնարեանին, Պալմաշեանին, Արզուման Սօրոսը: Գուշեանին, Պալմաշեանին և Օբոյեանին:

Ներկայ տարվայ ընթացքում, ինչպէս հաղորդում է «Торгово Пр. Газета» լրագիրը, երկրագործութեան և պետական կալուածների միխատրութիւնը թոյլ է տուել բանալու գիւղատնտեսական 92 ցուցահանդէս եւրոպական Ռուսաստանում, Սիբիրում և Կովկասում: Այդ ցուցահանդէսներից, որոնք կը բացվին զանազան ժամանակ, սկսած քաղնայից մինչև աշունը, 35-ը միացած կը լինեն տնայագործութեան հետ, 35-ը նուիրված կը լինեն անասնաբուծութեան, 9-ը—այգեգործութեան, 2-ը—ձրկնաբուծութեան, 4-ը—կաթնատնտեսութեան, 4-ը—թռչնապահութեան և 2-ը մեղուապահութեան: Միևնոյն ժամանակ շատ տեղերում գիւղատնտեսական մասնաւորական ճիւղերը կը միացնվին միմեանց հետ և կը կազմվին ընդհանուր ցուցահանդէսներ: Հաղորդակցութեան ճանապարհների միխատրութիւնը յատկացրել է այդ բոլոր ցուցահանդէսներին արտօնաւ տարիք՝ էքսպօնատները երկաթուղիներով տեղափոխելու համար:

Թիֆլիսի նահանգապետը առաջարկեց ոստիկանապետին յայտնել Թիֆլիսի հրէական համայնքին, որ նրա կողմից արգելք չի լինի, եթէ հրէաների հոգեւոր կառավարութիւնը նուիրաւորութիւններ հաւաքէ Թիֆլիսի նահանգի սահմաններում: Սինագոգա չինուր համար, այն պայմանով միայն, որ նուէրները հաւաքվին միայն հրէաներից: Սրա հետ միասին նահանգապետը առաջարկեց յայտնել հրէական համայնքին, որ այսուհետ պաշտօնական թղթերում իրանց չանուանեն վրացական հրէաներ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներկայ տարվայ փետրվարի 1-ին լրանում է յայտնի գրող և «Русская Мысль» ամսագրի ու «Русскія Вѣдомости» լրագրի ու մի քանի ուրիշ հրատարակութիւնների յաշտակելից Վ. Ա. Գոյցեվի գրական գործունէութեան 25-ամեակը: Գոյցեվի բազմաթիւ համակրողները և Մովսիլայի գրականական ու գիտնական աշխարհի ներկայացուցիչները պատրաստվում են այդ օրը հանդիսաւոր կերպով տօնակել:

ՆՈՐ-ԲԱՍԱՅԷՏԻՑ մեզ գրում են. «Այս տարի մեր գաւառում սարսափելի ցուրտ է: Սկսնի լիճը այս տարի սառել է, մի բան, որ շատ քիչ է պատահում. նաեւ քաղաքում կոտրելով հազիւ են կարողանում ձանապարհ բանալ իրանց համար»:

ԱԽԱՆԻՍԻՑ մեզ գրում են. «Յունվարի 19-ին տեղիս մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ այստեղի օրիորդաց ուսումնարանի դաշխնում, նոյն ուսումնարանի չքաւոր աշակերտների օգտին, տեղի ունեցաւ ներկայացում-համերգ գրական բաժնով, որը նուիրված էր անմահ հրապարակախօս Գրիգոր Արծրունու մահվան տառամեակի յիշատակին: Կարգադրեցին նրա համառոտ կենսագրութիւնը, առաջին առաջնորդները և այլն: Զը նայելով բազմաթիւ խոնարհների, երեկոյթը սպասածից լաւ անցաւ»:

ԱԽԱՆԻՍԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Բօրթօմի կալուածքի սահմաններում գտնվող 22 գիւղերից երկուսը հայաբնակ են—Ղըլ-Գիլիսան և Մօլիթը: Վերջինս կառավարութիւնը այդ երկու գիւղը Գորու գաւառի վարչութեան իրաւասութիւնից հանել և միացրել է Ախալքալաքի գաւառի Բարալէթի չինական համայնքին, որով այդ համայնքը գիւղերի թիւը հիմտ հասնում է 24-ի: Դա մեծ բարիք է այդ գիւղերի ազգաբնակչութեան համար, որովհետեւ նրանք բոլորովին կտրված էին իրանց գաւառական կենտրոնից, և այդ հանգամանքը մեծ չարիքների պատճառ էր լինում: Մօտ օրերս զըլ-Գիլիսեցի մի քանի գիւղա-

գրեցի առաջին անգամ գանգատի էին եկել Ախալքալաք մի բռնություն համար, որ կատարվել էր իրանց գեղընում Յոյս ունենալ, որ մեր գաւառին միանալուց յետոյ, մասնաւորապէս գեղընում երբեմն կատարված ապօրինի արարածները այլևս չեն կրկնվի:

ՆՈՐ-ՔԱՅԱՅԷՏԻՍ Ժողովուրդը հաշտութեամբ հարաբերւած էր իր անդամներին հետեւեալ ժողովուրդներին: Նոր-Քայաղէտցիներին համար երկու տարեկան քառամասն խումբ, որը, ինչպէս երևում է, մեծ ազդեցութիւն կունենայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Զմիւռնիա, դեկտեմբերի 22-ին
Ներկայ ամսոյ 17-ին տեղիւ հայութիւնը անդամներով կորուստ մը ունեցաւ յանձին Գրիգոր Շահինեանի... Վերջին վայրկեանէն դեռ երկու ժամ առաջ Շահինեան իր առողջութեամբ մասին մեծ վատահոգութիւն կուտար այցելու բարեկամաց խոստովանելով թէ՛ չեթէ ոչ նոր տարին Մոսկուի անպատճառ ոտքի պիտի կրնամ ելլել և աշակերտներու դասախօսութեան սկսիլ: Ու ահա այս խոստովանութենէն երկու երեք ժամ վերջ անողոքի մահը կուգայ խել մեզմէ երիտասարդ բանաստեղծը: Բանաստեղծը, լեզուաբանը, գրագէտը, և բանիբուն դաստիարակը, որ արդէ հայ նսնմ գրականութեան վրա կը փայլէր իր բնածին տաղանդով:

Շահինեան, ընդ մեզնիս, իր նախնական ուսումը Մադրիսայի դպրոցը առնելէ ետք, Արմաշու Դպրեմանքէն ալ չընտանարտ ելլելով կը դառնայ իր հայրենիքը, հոն անմիջապէս Վերի գիւղի դպրոցին տեսչութեան պաշտօնը կը ստանձնէ. ապէս կը սկսի իր համարձեր շինել դեռ 21—22 տարեկան հասակին մէջ, որ աւելոր ժողովրդին համակրանքը կը շահի և յաջորդ չըմանի Մալթայի ու Լուսաւորեան ազգային վարժարանին տեսչութեան կը հրաւիրվի, զոր ստանձնելով անձնուիրաբար կաշխատէր զայն բարեկարգելու: Մինչև ներկայ տարւոյս ամսավերջը ծնութիւնները իր պաշտօնավարութիւնը չարժանակելէ վերջ, յուլիսին կը հրաժարի այդ պաշտօնէն, և վերջնականապէս՝ ընտանիքով Իգմիր հաստատվելու որոշումը կուտայ: Իգմիր գալուն պէս ազգային ու Մեհարպեան և Ամերիկեանց աղկանց վարժարաններուն մէջ հայերէն դասախօսութեան պաշտօնը կը ստանձնէ:

Դպրոցական նոր շրջանի առաջին 3—4 շաբաթը հազիւ անցած էր, երբ Շահինեան պարզ ցրտառութեամբ մը անկողին կիցայ, մէկ երկու օրէն ելլելու յոյսով, բայց հիւանդութիւնը որ աւելոր ծանր հանգամանք մը կ'առնէ և ժանտախտի կը փոխվի. այս միջոցին Շահինեանի ծնողքը Մադրիսայէն կը փութան իրենց գաւառին մօտ և ամեն ինչով ի գործ կը դրնեն անոր առողջութեան համար: Այսպէս մէկ կողմէն ծնողքին և ընտանիքին խնամքները, և միւս կողմէն բժշկական դարմանները ապարդիւն չեն մնար. քիչ-քիչ Շահինեանի վիճակը կը կազդուրվի ու ալ բոլորովին վտանգը անցնողը կը թուի: Ամեն կողմէ ուրախութեան արտայայտութիւններ կը լսվին, նոյն իսկ օրվան մամուլը հրապարակով իր ուրախութիւնը կը ծանուցանէր հայ հասարակութեան: Բայց այս հրատարակումէն 3—4 օր վերջն է, որ մեզ կը վիճակի Շահինեանի տարածած մահը ողբալու սոյն էջերուն մէջ... Դեկտեմբերի 17-ին, կէսօրէն առաջ, ժամը 11-ին ստիկները յանկարծ Շահինեանին բերնէն պողած արեւն հոսելով անմիջապէս կը մեռնի. երկուրդին այդ անկացած մարմինը դազաղի մէջ ամփոփելով ու Ստեփանոս եկեղեցին կը փոխադրուի և յաջորդ օրը ազգային ու Մեհարպեան վարժարանը կը փակվի ի նշան սգոյ: Շատերու կողմէն եկած ծաղկեպառները դազաղը կողողեն, ժամը 10, 50-ին (ը. ե.) յուշարկաւորութեան արարողութիւնը կը սկսի: Դազաղը չընկալած էին ուսուցչաց խումբը և աշակերտները. պաշտամունքին աւարտումէն յետոյ, աշակերտներէն մին դամբանական ճառ մը կարդաց, զոր ընթացքում հանգուցեալը իրը գրագէտ և ուսուցիչ Դամբանականէն վերջ մեծ թափօր մը կը կազմի, առջնէն աշակերտները ծաղկեպառները բռնած կը քալեն, անոնց հետեւն ուսուցչաց խումբը սե շարքը բռնած յամբաժայլ կընթանան, որուն կը հետեւէ դազաղը և յուշարկաւորը. այսպէս թափօրը հանգուցեալին

ընակարանին առջնէն կը դառնայ, ուրիշ լուսող լաց ու կոծի աղաղակները ամբողջ յուշարկաւորներու սիրտը կը չարժեն: Վերջապէս Պատմահանէի կայարանին առջև կանգ կ'առնու թափօրը և դազաղը մեռելակիր կ'առնէ մէջ դնելով ինչպէս նաև յուշարկաւորաց մեծ մասն ալ կ'առնէրով գերեզմանատուն կերթան, ուր կ'ընկնան վերջին արարողութենէ յետոյ Շահինեանի մարմինը ցուրտ հողին կը յանձնեն, այն ագահ հողին, որ ամբողջ մարդկային ազգն իսկ կըլլէ չը պիտի յաղենայ:

Գրիգոր Շահինեանի գրելը 1899-էն է, որ կը սկսվի թուի առնել և այդ թուականէն է, որ ստեղծ լրագրական հրապարակի վրա կերեի նա: Ազգագրութեան հարցեր, լեզուաբանական խնդիրներ, բանաստեղծական քերթումներ, մասնագրական քննադատականներ և տոնային կեանքէն առնված միակերպ կըլլան իր նիւթերը: Քիչ ժամանակով միջոցին արդէն իր գրագէտի համբաւը չինց ու ամեն կողմէ զինք քաջալերողներ չը պակեցան Շահինեան իր վեհ նկարագրով, սկզբունքով, կամքով, ինչպէս նաև անկերծ ընաւորութեան տէր ըլլալով էր, որ այդպիսի շատ գիւթեց հայ ժողովուրդը, որ այսօր, աւանդ, սրտի թախմութեամբ կողքաց անոր մահը...

Շահինեանի յօդուածները մասնաւորաբար կերեւին «Արեւելք», «Քիւրակի», «Ա. Մամուլ» և «Մամուլ» մէջ. ապէս զատ Շահինեան պատրաստած էր Քննական և եկեղեցական պատմութիւն և ամեն ջանքով, որուն տպագրութեան համար մեկնեալ մըն ալ գտած էր և մօտ ժամանակէն լոյս պիտի տեսնէր, որ հայ մատենագրութեան մէջ մեծ պակաս մը պիտի լցնէր. այսօր, աւանդ, Շահինեան իր բազմալիստ երկին տպագրութիւնը ինք չը տեսած կանխեստապէս այս աշխատանք իր 26 տարու ծաղիկ հասակին մէջ, սակայն կը յետանգ, որ այդ բարեբար պիտի փութանէ անոր տպագրութիւնը Շահինեանի յիշատակը անմահացնելու և յաւերժացնելու համար: Շահինեան կը թողու անմահութիւնը այլ մը, սիրտսու զաւակ մը, վշտաբեկ ծնող մը և հարազատները:

Ս. Թորոնտոն

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՍՏԱՆԻՑ

Ուշտ, յունվարի 17-ին
Յունվարի 11-ի չարախ երեկոյեան տեղիւ սիրողները, ուսուցչական խմբի աջակցութեամբ, տունէն մի ներկայացուց յօդու գրագրի Ներկայացուց կազմակերպվել էր պ. Յ. Ղազարեանի աշխատութեամբ. խաղում էին ձգարները էր Ալֆոնս Դոքէից, և «Միս» ֆարսը:

Պիէսի ամբողջ բովանդակութիւնը գլխաւորապէս կենտրոնացած էր երկու նշանաւոր կէտերի վրա, թէ ինչպէս զանազան ախտերը ժառանգաբար ծնողներից անցնում են զաւակներին, ինչի այդ ախտը անուանվում էր, հարեցողութիւն, թղթառնութիւն կամ ուրիշ որ և է հիւանդութիւն, սրով անխուսէ ծնողների պատճառով տուժում են որդիները յաջորդաբար, իսկ երկրորդ՝ թէ ինչպէս մայրերը իրանց բնուծ սիրով վնասում, նոյն իսկ վերջին դժբաղդութեան են հասնում իրանց զաւակներին, պահելով նրանց շարունակ իրանց աչքի առաջ, գրվելով, փաղաքելով: «Միս» պատկերացնում էր, թէ, ինչպէս հարուստների որդիները դատարկ գլխով անցնում են արտասանման, ու չըաջութեան վատում են փողերը և կրկին գտտարկ գլխով վերադառնում հայրենիք: «Ժառանգական ախտեր» խիստ գեղեցիկ բարոյական դաս էր մեր ժողովրդի համար:

Ներկայացումը բաւական աղով անցաւ. սիրողներից աւելին պտնանջել չենք կարող. առանձնապէս աչքի էին ընկնում իրանց խաղով Ղազարեանի ամուսինները և պ. Նիկիեան:

Բազմութիւն շատ էլ չը կար թատրոնում, թէպէտ այդ առանձնապէս աչքի էր ընկնում թատերադրանքի շատ փոքր լինելու պատճառով և գուցէ այդ պատճառով էր, որ մի և նոյն ներկայացումը երկու գիշեր տունէն, մի գիշեր տղամարդկանց, իսկ յաջորդ գիշերը կանանց համար:

Ժամանակ է արդէն, որ մենք հասկանանք թատրոնի նշանակութիւնը և լուրջ վերաբերվենք դէպի բնութ, որը կենսական զարգացում է մեզ համար և որից մենք շատ ու շատ բաներ կառող ենք սովորել:

Կիրակի, յունվարի 12-ին, անգլիական արականարդ դեսպանութիւնը ժամանեց Ուշտ:

այստեղ նրան մեծ շքով ընդունեցին: Սարգսուրը, Ռաշտի դատաւորը, մինչև Փիւր-բազար ընդառաջ էր գնացել, իսկ Սպարկ երկու օր առաջ գնացել էր էնդէլի ուղեկցելու դեսպանութեան:

Ս. Մ. Պ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

4. Պօլից «Нов. Время» լրագրին հետագրում են յունվարի 16-ին հետեւեալը. «Բ. Դուրը և հայոց պատերազմական շրջանները Օրմանեան պատերազմի կեսիցի դէմ արած փորձը բացատրում են, որպէս հետեւեալ անձնական վրէժխնդրութեան Պատերազմի առողջական գրութիւնը աւելի լաւ է. նա փոխադրվեց իր տունը՝ Պէրայում: Սակայն յանցուղի գրութիւնը, որ բանադրված էր ուսուցչականութեան միջնորդութեան կից, շատ ծանր է և վտանգաւոր: Կայանաւորման օրակէն եկեղեցում գտնվող ամբարը քիչ մնաց պատտապատու անէր նրան: Մեծ վտանգ և կիսամեռ դրութեան մէջ՝ նա երկար ժամանակ մնաց առանց բժշկական որ և է օգնութեան: Տեղի ունեցան բաղնիքի ձերբակալութիւնները հայերի մէջ: Գուռ-Դափու թաղը լցված է խուզարկութիւնով: Կատարող ոստիկանութեամբ: Առանձին իրադէպ հրամայված է պաշտօնականներին, որոնք նշանակվում են այն վիշտներում, ուր սէտք է բէֆօրմներ մտնել: Երբեք չը խախտել արարութեան և հաւատարմութեան սկզբունքները և ամեն ջանք գործընել ազանդելու օրէնքի ճիշդ գործադրութիւնը: Հրատարակված են երկրագործութեան գիրկեւորների անունները Ագրիանայի, Սօլունի, Մոնաստիրի, Կոսովի, Ենիքիայի և Սկպարի վիշտներում: Բէֆօրմներ յայտարարելու օրից Ագրիանայի, Դեպարտում, Կարկիսիում, Գուռ-Դափում և Բոզոսում պաշտօն են ստացել 85 մանկականներ և 67 քրիստոնեաներ:

—Ինչպէս հաւատացնում է «Daily News» լրագիրը, սարսնական կատարութիւնը չը թողարկեց թագաժառանգութիւնը: Լուիզային դատարան ուղարկել ոչ հաւատարմատար, ոչ էլ իր ձեռքով դրած յիշատակագիրը: Նրան դատում էին նրա անհաշտ թշնամու՝ Գէօրգ Թագաւորի նշանակած դատարանները: Նիստերը անդի ունէին մեծ զաղաւարտութեամբ: Լուր է պատում, որ Թագաւորական ընտանիքի անդամները թախմաժանցով համոզում են թագաժառանգի հրաժարվել զանի վրա իր ունեցած իրաւունքներից յօդու իր անդամիկ որդու, տասը տարեկան տղայի, որովհետեւ թագաժառանգի տողովութիւնը շատ խախտու է, և անյարմար է նրան զանք բարձրանալ իր կնիք փախուստից յետոյ: Դեղեղէնից ստացված մակեդոնացի հրոսակները կտրական կերպով հերքում են այդ լուրերը, անուանելով նրանց մտացածին: Դատարանի վիճուք արդէն յայտնի է: Թագաժառանգութեան գրված է բոլոր այն իրաւունքները, որ պատկանում են նրան թէ իր ծննդեամբ և թէ իր ամուսնութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

23 յունվարի
ՊԵՏԵՐԲՈՐԳ. Յունվարի 22-ին կայացաւ պարահանդէս ֆինանսների միւստի մօտ: ՅիւլիոՊՈՂ. Պարիզի թիւրքաց դեսպան Մուսիր-Պէլ կանչված է Կ. Պօլս. նա սուլթանի դժգոհութիւնը յարուցեց հանգուցեալ Մահմուդ-փաշայի մարմինը փոխադրելու հարցի մասին բանակցութիւնների անաղղութեան պատճառով. առում են, որ նա չի վերադառնայ իր պաշտօնին: Գործերի գրութիւնը եմիտում վատանում է. Սիբիրից արեւելք են ուղարկված 15 բաւալիօններ: Անգլիացիների հետ միջնորդեցքը կարգադրված չէ: Անգլիական և թիւրքական կալուածների սահմանները որոշելու համար կազմված յանձնաժողովը դեռ չէ սկսել գործը:

ԵՄՍՏԵՐԲՈՐԳ. Ուրալեան լեռնադէղինաբերողների համաժողովը փակվեց յունվարի 20-ին: Որոշված է միջնորդել բանալու մետալական և ընդհանուր բոլորակ Եկատերինբուրգում. խնդրել, որ գանձարանը դնէ ուրալեան գործարաններից թույլ և երկաթի մինչև յունվարի 1-ը չը ծախված մնացորդները, որոնք միմիայն պետական բանկում գրաւ են դրված 7 միլիոն դոլարի, այժմ գոյութիւն չունեցող գնով, և Դաւնի քաղաքում փակել պօրտօֆրանկո արտասահմանեան մետաղների և դործուածքների համար:

Կ. ՊՈԼԻՍ. Դիպլոմատական շրջաններում կանակածով են վերաբերվում Բուչուլի թիւրքաց առեւտրական գործակալի հաղորդած տեղեկութիւններին, որ իրը թէ բոլորական հրոսակաւորները ներս կը խուսեն զարնանը թիւրքիս:

ՅիւլիոՊՈՂ. Անատոլիական և բուսթիական երկաթուղիների վարչութեանը հրամայված է մեծացնել վազոնների թիւը և պատրաստ պահել զարնան համար:

ՍՈՅԻՍ. Բուչուլի թիւրքաց հիւպատոսական գործակալի հաղորդագրութեան համաձայն, թէ եօթը բոլորական հրոսակաւորներ են կազմակերպվել Բուլարիայում Մակեդոնեաներս խուսելու համար, «Բուլարական հեռագրական գործակալութիւնը» լիազօրութիւն ունի հերքելու այդ հաղորդագրութիւնը և յայտնելու, որ բոլորական կառավարութիւնը համաձայն է միջազգային քննութիւն կատարել, որը կը հաստատէ թիւրքաց գործակալի հաղորդած տեղեկութեան անհիմն լինելը:

ԲԱԹՈՒՄ. Այլովում է Մանթաշէլի գործարանը. հրդեհը սպառնալի չափեր է ընդունում: ԲՈՒԴԱՊԷՏ. Պարիզ-Յովիէի կայսրը ժամանեց երկարատեւ մնալու համար:

ԼՕՆԴՈՆ. Պաշտօնապէս հաղորդում է, որ թագաւորի առողջական դրութեան մէջ բարելոքում է նկատվում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պետական դէպարտամենտում տեղեկութիւններ ստանալուց յետոյ, թէ Գոնզուարի նախագահ զենքաւ Սիէրա յանձնեց լիազօրութիւնները միջնորդների խորհրդին և նախագահ ընտրված գոլտոր Բոնիլիա իրան նախագահ յայտարարեց, ամբիկական զինուորական նաւերին հրամանադրված է գնալ Ամապալու՝ նահանգների շահերը պաշտպանելու համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Հոսմա-կաթօլիկական միտրօպոլիտ Կրիստօֆիկու առողջական դրութիւնը վտանգաւոր է: Ինքնազգացումը մի փոքր լաւացաւ:

24 յունվարի

ԵՆԻՍՕՆ. Ենիքսոն—Գոլայա-Պրիստան դժի վրա անթիւ հեռագրի փորձերը գեղեցիկ նշանակեցին տեղեկին Գոլայա-Պրիստանից հեռագրելը դժուարանում է ձիւների հալվելու պատճառով:

ՍՈՅԻՍ. Ազգային ժողովում միջնորդ-նախագահը յայտնեց, որ մակեդոնական հարցը մեծ պետութիւնների ձեռքումն է: Բուլարիան պարտաւոր է հանգիստ օպաւել անցնելի զարգացմանը: Թիւրքիան համաձայնեց նշանակել յանձնաժողով մակեդոնական փախուսականներին վերադարձնելու հարցի համար: Կառավարութիւնը չի թող տայ, որ Բուլարիայում ապրող մակեդոնացիները հրոսակաւորներ կազմակերպեն և գործեն օրէնքների դէմ: Լուր է պտտում, որ սահմանադրային կէտերում կը յայտարարվի պաշարման գրութիւն:

ԿԱՐԱՅԱՍ. Կառավարութիւնը առաջարկեց տեղացի և օտարազգի վաճառականներին ստորագրվել համարեա մէկ և կէս միլիոն բոլովարի ստիպողական փոխառութեանը: ԲԵՐԼԻՆ. Տեղեկներից «Standard» լրագրին հաղորդած տեղեկութեան համեմատ, չինական կայսրուհի-ինամակալուէին վախճանվեց Նրա մահը դաղմանի կը պահվի մինչև չինական Նոր տարվայ տօնախմբութիւնների վերջանալը:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱՎԻՍՏԱՆԻՐ ԳԱՆՔԱՐ ՀՐԱՊԱՐԱԿԻՆԵՐԻ ՔԱՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆՆԱԿ ԻՍԱՀԱՅ ՄԵԼԻԿ-ԱՆՍՏԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆԵՐԱՆՈՑ Բ. ՆԱԽԱՄԱՐԵՆԵՆԻ

- (Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ա մ ե 6 օ Ր, բ ա ց Ի կ ի ր ա կ ի օ Ր Ե Ր Ի ց Ե
Ա Ռ Ա Յ Տ Ն Ե Ր Ը
Բ. Ա. ՆԱԽԱՄԱՐԵՆԵՆԻ—11—12 ժ. վերաբաւեցեալ, վերջական (սիֆիլիս) և միջոցաւ. հիւանդ.
ԶԻՅՈՎԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային.
Մ. Գ. ԱՌԵՏԱՆԱՆ—10—11 ժ. մարթու, վերջական և վերաբաւեցեալ.
Զ. Բ. ԱՌԱՄԱՐԵՆԵՆԻ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայց.
Գ. Բ. ԶԱՆԻՆԵՎ—12—1 ժ. սկսնալի, քթի և կուրգի.
Գ. Ա. ԲԱՐԱՆԵՆԵՆԻ—11—12 ժ. ներքին և երեխայց.
Ա. Պ. ԶԱՐԱՆԵՆԵՆԻ—11—12 ժ. ներքին և երեխայց.
Բ. ՆԱԽԱՄԱՐԵՆԵՆԻ—11—12 ժ. վերաբաւեցեալ.
Ն. Ն. ԱՌԱՄԱՐԵՆԵՆԻ—5—6 ժ. վերաբաւեցեալ.
Ն. Ն. ԱՌԱՄԱՐԵՆԵՆԻ—6—7 ժ. նեարդային (երկկորաբաւ) ներքին և վերջական.
ԿԻՆԻՍԻՆԵՎ ԶԱՐԱՆԵՆԵՆԻ—7—12 ժ. մանկաբարձութեան և կանանց.
Գ. Ա. ԲԱՐԱՆԵՆԵՆԻ—7—8 ժ.
Բ. Ա. ՆԱԽԱՄԱՐԵՆԵՆԻ—7—8 ժ.
Վարդ 50 կ. չըաւորները ձրի համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.
Օ. Յ. ԱՌԱՄԱՐԵՆԵՆԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ ՆԱԽԱՄԱՐԵՆԵՆԻ

(5, 10, 15, 20 & 25) 4-60